

M. Archam
Posto Restante
Athènes—(Grèce)

ՄԻՈՒԹԻՒՆ

Տարեկան ֆրանք 4
Վեցամսեայ » 2

ՕՌԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ ԳԱՂԱՓԱՐԻ

ԽԱՌՆ ԺՈՂՈՎԻ ՀԱՄԱՐ

ԸԼԼԱԼԻԲ ԾԱՆԹԵՐԸ ՀԱՅԹԱՅԹԵԼՈՒ ՄԻՋՈՅՆԵՐԻ

Մեր անցեալ թուով առաջարկած էինք Բարիդի մէջ գումարել Հայկական ժողով մը, որ պաշտօն ունենայ մեր արդի խառնաշփոթ կացութեան վերջ մը տալու միջոցներուն վրայ խորհրդակցելով գործելու եղանակներն որոշել և մի նոր ազգային ծրագիր կազմել. այս օրինակ գումարման մը կարեւորութիւնը ի հարկէ ամէն հայ անհատ կզգայ և կը փափագի անոր իրականացման:

Շատեր կը հարցնեն մեզ թէ՛ ո՞վ պիտի վճարէ պատգամաւորներու երթևեկութեան ծախքերը: Շատ ճիշդ է, բայց երբ մարդ մը ո՛ր և ինչորոյ կամ գործի մէջ զօրաւոր կամք ունենայ, անոր համար անկարելի բաւը երբեք նշանակութիւն չունենար:

Մենք ալ փոխանակ այս կամ այն կուսակցութեան կոյր գործիք դառնալով կեղծաւորութիւններ ու շողոքորդութիւններ չապշելու, եթէ ըլլանք անկեղծ և անհաճախդիր Հայրենասէրներ. մեր նիւթական ու բարոյական բոլոր ոյժերը մի միայն ազգային նուիրական շահերուն ծառայեցնելու կամք ունենանք, մեր բոլոր ծրագիրները գործադրելու համար միջոցներ չեն պակսիր մեզ:

Պատուիրակներու ծախքերը կրնան հայթայթուիլ հետեւեալ երկու միջոցներով.

1) Բարիդի մէջ նախ կազմել վստահելի դիրք ունեցող անձնաւորութիւններէ բաղկացեալ մասնախումբ մը, որուն նախաձեռնութեամբ տպագրուին ու կնքուին 10 000 նուիրատուներ, և շրջաբերութեան հանուն արտասահմանի բոլոր Հայաստան երկիրներու մէջ:

2) Եթէ առաջին միջոցը անիրականալի թուի, ըստ մեզ աւելի լաւ կը լինի յիշեալ մասնախումբը 20,000 վիճակահանութեան տոմսեր շրջաբերութեան հանէ, դանձուած դրամին կէսը այսինքն 10 000 ֆրանքը երկու հարիւր շահող թիւերու բաժնէ աստիճանաբար, ինչպէս կը կատարուի օտարազգեաց մէջ. իսկ մնացեալ գումարը յատկացնէ ժողովի ծախքերուն:

Երբ ժողովի հետեւանք արդիւնաբեր ըլլայ և այս պիտի վստահելի մարմին մը գոյութիւն ունենայ, սոյն վիճակահանութիւնը կրնայ վեց ամիսն անգամ մը կատարուիլ, որով թէ՛ ժողովրդին շահ մը ցոյց տուած կը լինինք և թէ՛ ազգային գանձին համար տարեկան 20,000 ֆրանք եկամուտի աղբիւր մը բացած կը լինինք:

Մենք հայերս՝ ունինք հարուստ մեծատուններ,

անհաճախդիր Հայրենասէրներ և անձնուրաց հերոսներ. մեզի բան մը չպակսիր միայն կամք, անկեղծութիւն և եղբայրասիրութիւն: Եթէ ունենանք այս յատկութիւնները ո՛չ միայն հարուստին, այլ ամենայեւն չքաւոր հայուն զրպանը բաց պիտի ըլլայ ազգային Ս. Գործին համար:

ՄԱՅՐ-ԵՐԿՐԻ ՄԷՋ ԳՈՐԾՈՂ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆՆԵՐՈՒ ԳԱՂԱՓԱՐԸ

Հետեւեալ նամակը յանուն անկազմակալութեան սիրայօժար կը հրատարակենք արտասահմանեան կուսակցամուր դասակարգի (անուանական յեղափոխականներու) հասկցնելու համար թէ բուն երկրի մէջ գործող ճշմարիտ Հայ յեղափոխականները ինչ գաղափար ունին մեր վրայ:

* * * 25 Նոյեմբեր 1899

Ստացած ենք «Միութիւն»ի 36 թիւը և Ձեր երկտողը:

Ամիսէն աւելի է որ Ռուսաստանի մէջ սաստիկ հալածանք կայ Հայ յեղափոխականներու դէմ: Ի հարկէ դա պատրուակ մէ. հալածանքը «Հայ» անուան դէմ է: Բաւական գործիչներ ձերբակալուած և ոմանք ալ փախուստ տուած են. այդ պատճառաւ այն կողմը զրկուելիքները չենք կարող յղել. իսկ ... տեղի եղածներն այս անգամուայ համար կը զրկենք:

* * *

Միութեան խնդրոյ մասին մենք ոչինչ չենք կարող ասել. բուն երկրի մէջ ապրողներս միութեան մասին բնաւ ալ չենք մտածեր, քանի որ Թուրքն ու Քուրդը առանց մեր մի ու թե ան նայելու կը կոտորեն մեզ, հետեւաբար անոնց դէմ զէնք վերցնողը կուսակցութիւն բառն իսկ արտասանել չուզեր և մոռցած ալ է:

Ազատ երկրի մէջ ապրողներն՝ ո՞րքան կուզեն թող ճաճաւն, մէկը՝ իր անցեալ փառքը թող լայ, միւսը իր ապրուստի միջոցէ զրկուած ըլլալը թող մտածէ, ոմանք ալ «միութիւն» բառը համբիշ ընելով թող պըտրտին, ինչպէս ըսինք՝ մենք չենք կարող մեր թշնամւոյն հասկցնել թէ՛ մինչև որ միութիւն ունենանք, մեզ մի՛ կոտորէք:

Ազատ երկրի մէջ միութիւն պուացող պարոններէն մէկը չի տեսանք (1) որ ընդհ. կոտորածէ վերջ բուն

(1) «Միութիւն»ը ո՛չ կուսակցութիւն մը կը ներկայացնէ և ո՛չ ալ այդ նպատակի համար նուէրներ կը հաւաքէ որ կարող լինի ճանապարհածախսերը հոգալ

երկիրը մտնէր ու գործէր, Մենք հաւատացած ենք որ մէկը եթէ երկիր մտնէ, ղէ՛նք և հա՛ց պիտի պոռայ: Այսօր ժողովուրդը ինչ ընելիքը չգիտէ, կտոր մը հաց չունի իր տղայոց կերցնէ. ժանգոտ սուր մը չունի իր սիրելի աղջիկը տանողին դէմ կռուի: Ալ աւելին կարելի էր ըսել, բայց նպատակն էր չէ այդ խնդրոյ մասին գրել:

ՊԱՐՈՅՐ

ՀԱՅԿԱԿԱՆ ԽՈՒՆ ԺՈՂՈՎԻ ԱՌԹԻԻ

Տիար Մինաս Զերազ «Խառն ժողով»-ի մասին իւր պատ.՝ *Arménie* Վերջին թիւին մէջ հետեւեալ յայտարարութիւնը հրատարակած է:

«Աթէնք հրատարակուող «Միութիւն»-ը՝ որ պաշտօնն ստանձնած է միութիւն և համարաւորաբար «Խոսքիւն քարոզել, կառավարել Հայկական ժողով մը գումարել ի Բարիդ առաջիկայ Մայիս ամսոյ մէջ, ընդ նախագահութեամբ մեր տնօրէնի:

«Այն խումբերը որոնք ունին իրենց օւկանները, Վարձէնիս, Հնչակ, Դրօշակ և Մարտ «եթէ կը հաւատան այս առաջարկի օգտակարութեան», «թող հաճին մեզ տեղեկացնել Բարիդի իրենց ներկա-«յացուցչաց անունները, որոնց պաշտօն պիտի տրուի ժողովին մասնակցելու, որպէս զի գումարելի ժողով» «վին առթիւ պէտք եղած նախնական բանակցութիւն»-ները կատարեն:

«Մենք ամեն ջանք ի գործ պիտի դնենք այդ չորս» «խումբերու ներկայացուցչաց միջև համաձայնութիւն «գոյացնել մոռացութեան տալով անցիւղը»:

Ինչպէս յայտնի է յարգելի բրոքէստօրը՝ որ իր անկեղծ հայրենասիրութեամբ հայ հասարակութեան համակրութիւնը կը գրաւէ արժանապէս, այսօրինակ ժողովի մը գումարման համակիր ու համաժողով է, ինչպէս կ'երևի իր յայտարարութիւնէն: Մենք կը հաւատանք որ բոլոր կուսակցական և ոչ-կուսակցական հայերն ալ պիտի հետեւին անոր, անսահման վստահութիւն ունենալով անոր անշահախնդրութեան ու անկողմնակալութեան վրայ:

Սիրելի էր մեզ յուսալ որ կուսակցական պետերն ալ գէթ այս խնդրոյ մէջ անձնական կամ կուսակցական գծով հաշիւները մի կողմ թողնելով իւր ճշմարիտ հայ և արեւելիկ եղբայր համաձայնէին ու տմին ջանք՝ չի խնայէին ժողովի գումարումը փութացնել: Մենք, «Միութեան և Համերաշխութեան» բոլոր գաղափարակիցներս՝ որ ի սրտէ կը փափգանք այդ ժողովի իրականացման, երբ գումարումը տեղի ունենայ, մեր կողմէն լիազօր ներկայացուցիչ կը կարգենք բարիզաբնակ ազգայիններէն «Բանասէր»-ի տնօրէն-խմբա-

այն միութեանականներու, որոնք կը բաղձան երկիր մտնել ու գործել: Միութեան կամ համերաշխութեան բաղձացողներն ունին պատրաստի խումբեր որոնք անմիջապէս կը մեկնին արաւսահամանէն երբ ունենան իրենց պիտոյքներն ու ճանապարհածախսը. ասոնցմէ մին ամիսներ առաջ ճարահասակով դիմած էր յեղափոխական կուսակցութեան մը, որ փուռ խոստումներով ընկրկեցաւ խոր լուծեան մէջ ինչ է պատճառը մեզ անյայտ կը մնայ ցարդ:

Մ. Խ.

գրապետ Տիար Կարապետ Բասմաջեանը:

Կը հրաւիրենք բոլոր ազգայինները և բոլոր կուսակցականները ըլլան Հնչակեան, Դրօշակեան, Մարտական և Արմէնիական, որ իրենց կարծիքները հրապարակաւ յայտնեն աղատ համարձակ: «Միութիւն»-ի էջերը բաց պիտի լլլան այս խնդրոյ շուրջը դարձող ամէն կարգի գրութեանց:

4 Ո Չ

Հետեւեալն ստացած ենք «Հայկական Յեղափոխական Միութեան» Կ. Պոլսոյ Բօմիթէի (1) կողմէն:

... Խմբագրապետ

Պոլսոյ և գաւառներու բանտիւրէն ծայրայեղ թըլաւութեան սրտածմելի լուրեր կը հասնին: Ազգին լաւագոյն. բայց է՛ն դժբաղդ դաւակներն են որ կը հեծեն հոն զարհուրելի չարչարանքներով. իրեն բարոյական ու ֆիզիքական տառապանքներուն կը միանայ նիւթական ողբալի վիճակ մը: Հիւանդ ու անօթի՝ անոնք դանդաղ ու ահաւոր մահուան մը ճամբան բռնած են և մենք գիտենք որ անոցմէ ոմանք մեխած են լուռ ու մունչ բացարձակ մոռացութեան ու լքման մէջ:

Ամօթ մըն է որ մինչև հիմա Հայ ժողովուրդը անհատական կամ հաւաքական նախաձեռնութեամբ, գաղափարը ունեցած չըլլայ օգնութեան հասնելու մեր այդ դժբաղդ եղբայրներուն՝ որոնք ամեն բան զոհած են յաղթանակին համար. նպատակ մը, որ ամենուս իտէալն է:

Հայ ժողովուրդը իր բանտարկեալներուն տառապանքը կը բազմապատկէ իր անտարբերութեամբը զանոնք անօթի ու մերկ թողնելով, իր անհոգութեամբը անոնց տալով ազգէն լքուած ու մոռցուած ըլլալու ցաւը, որ անշուշտ աւելի դառն է իրենց սրտին քան նիւթական տանջանքները զոր կը կրեն: Աններելի է որ այս անտարբերութիւնը տեւէ այլ ևս:

«Հայկական Միութիւն»-ը իրեն նուիրական պարտք կը համարի կոչում ընել բովանդակ հայութեան օգնութեան հասնելու մեր բանտարկեալներուն, որոնցմէ մէկէ աւելին անբաւական սնունդի հետեւանօք թոքախտի ենթակալ ըլլալով, մահուան նախընթաց օրուան մէջ կը գտնուին և դիմում կ'ընեն մասնաւորապէս Զերազափրական զգացումներուն, Պ. Խմբագրապետ, որ հրատարակէր այս կոչը և Զերաթիւն մէջ հանգանակութիւն մը բանաք ի նպաստ այ բանտարկեալներուն:

«Հայկական Միութեան» խնդրանքին վրայ բարեզաբնակ վաճառական Պարոն Յ. Իսքընտէր, որ իր հայրենասիրական անկեղծ զգացումներովը հանրածանօթ է, հաճեցաւ՝ իբրեւ գանձապահ, ընդունիլ բոլոր նուիրատուութիւնները որոնք եւրօպայի և Ամերիկայի հայ գաղթականութեանց կողմէն, ինչպէս նաև ուրիշ տեղերէ, պիտի ղրկուին այդ նպատակով:

(1) Հայկ. Միութիւնը իր այս կոչը ընելէն առաջ պէտք էր նախապէս հասարակութեան յայանել իր կազմակերպութեան գոյնը, որպէս զի իւրաքանչիւր օր հաւատ ընծայելով օգնութեան ձեռք կարկառէր:

Մ. Խ.

Հասցեն՝

Monsieur J. Iskender

36 Rue de la Tour-d'Anvergne, 36

PARIS (FRANCE)

«Հայկ. Միութիւն»ը պիտի ծանուցանէ հրապարակաւ, մանրամասն հաշիւներով, հանգանակութեան ձեւացուցած գումարը և անոր ինչ կերպով իր նպատակին յատկացուիլը:

«Հայկ. Յեղափոխական Միութեան»

Կ. Պոլսոյ Բօմբիթէի կողմէն

Կ. Պոլս 1 Յունուար 1900

(Կնիք)

ՅՈՒՆԱՍՏԱՆ

ԵՒ ԱՆԳԼԻԱ

Առանց կեղծելու, տրտմութեամբ կը հաւատամ, Յունաց արդարեւ գայթակղեցուցիչ համախառնք մը արտայայտութիւնն ի նպատակ Անգլիացւոց:

Երբ բնութեան հակառակ այս համակրանաց առաջին նշաններն երեւցան, նախ՝ կարծեցինք բոլորովին բացառիկ և անհատ սկան զգացմանց հոսանք մը, ինչպէս ամեն ժողովրդոց մէջ կրնայ տեսնուիլ և ու է ազգային համերաշխութիւն մը չկրնար ունենալ, բայց դժբախտաբար պէտք եկաւ յայտնել և խոստովանել թէ՛ ի նպատակ Անգլիոյ եղած այս յայտարարութիւնը Յունաստանի մէջ պաշտօնական ձեւ մը կառնու:

Աթէնքի համալսարանին մէջ, Հարաւային Ափրիկէի պատերազմին մէջ ինկած անգլիացի զօրաց յիշատակը պատուելու համար հանդէս մը կատարուած է, և բրոֆս. Կոստասի ազգու ճառ մը խօսած, յայտնելով թէ Անգլիացիք, բաւին բուն նշանակութեամբ քաղաքակրթութեան համար կը պատերազմին և թէ Յունաստան չկրնար մոռնալ ինչ որ Անգլիոյ կը պարտի, թէ Անգլիա միշտ Հելլէն ազգին բարեկամն ու պաշտպանն եղած է: Նոյնպէս Յունաստանի բոլոր քաղաքներէն հանդէսին համաձայն գտնուելու հեռագրեր քաջած են:

Կէթ այսպէս է, և նոյն իսկ այս ձեւի տակ Աթէնքէն մեզ կը հասնի լուրն լրագիրներու միջոցաւ:

Յունաստանի այս ընթացքը ֆրանսայի մէջ զօրնուող Յունաստանի բազմաթիւ բարեկամներուն վրայ տխուր տպաւորութիւն մը պիտի ընէ. ամեն ազատասէր Թուրքիոյ պատերազմին ատեն կղզային իրենց սրտին բարախումը դէպի Հելլէնները: Անոնց թուոյն մէջ էի ես ալ, անդամակցեցայ նաեւ քօմիթէին որ ջանալը կել իրենց թէ՛ դրամական օգնութիւն և թէ պաշտպան: Ընկերակիցներու շատերուն նման, ըրի ինչ որ կարողացայ. և անկէց աւելին ալ, Յունաստանի պաշտպանութեան համար հոսանք մը ստեղծեցի, նպատակաւ եղաւ իրեն:

Եւ որովհետեւ իրենց եղբարց ազատութեան և հելլէնական երկրին ինքնօրինութեան համար կուող յոյն ժողովրդի դատը սուրբ և նուիրական կը համարէի, ահա՛ ճիշդ այդ պատճառաւ՝ դժկամակութեամբ և զգուանօք կը հեռացնեմ աչքերս, Աթէնքը անպատուող այդ տեսարանէն: Արդարեւ ժողովուրդ մը կորուսած պէտք է ըլլալ, արդարին ու անիրաւին, բարիին ու չարին ընտրութիւնը, պէտք է յետին աստիճանի մտամոլորութեան մատնուած ըլլալ, ուրանալու աս-

տիճանի հասնելու ուրիշ ժողովրդեան մը համար այն, ինչոր իրեն համար հաւատալիք մ'եղած է, երբ խնդրը իրեն կը վերաբերի, ըսել կ'ուզեմ՝ անկախութեան և ազատութեան համար:

Ինչպէ՞ս... Եւրոպայի մէջ չկայ ուրիշ ազգութիւն որ Յոյն ազգին չափ օտարի լուծին տակ անխնայ տառապած ըլլայ: Եւ հեռուէն, երբ ոչինչ կստիպէ զձեզ միջամտելու, առանց իսկ օգտակար ըլլալու համակրանաց կամ հակակրանաց ցոյց մը կամ հանդէս մը, Յունաստան հարստահարչին համար՝ և ոչ թէ զհին համար յուզուելու անամօթութիւնն ունի... Այն ազգը, որ Թէրմօքիէի, Բլադէայի, Մարաթօնի և Սալամիի փառաւոր յիշատակներով իրաւամբ կը պանծար և որ ազատ դարերէ ետք Պոցարիսով և իր անվեհեր ընկերներով կը հպարտանար, որ Բանարիսի բաջադորձութիւններուն յիմարի պէս կը ծափահարէր, այն ազգը, այն ազգը որ՝ երկար ատեն օտարներու գաւազանին կամ ետթաղանին տակ հեծեց, այսօր բարեմաղթութիւններ կ'ընէ. որո՞ւ... աւարառու և աւագակ Անգլիոյ, որ ազգերը կը կոտորէ անոնց ոսկին ու աղամանը յափշտակելու համար, միևնոյն Անգլիան, որ Յունաստանի պատկառելի հնութիւններուն վրայ գող և ամբարիշտ ձեռք մը երկնցնելով, լորտ *Enghin* սնտուկներուն մէջ, կը փոխադրէր ինչ որ կրնար ժանակին փոշիներուն մէջէն կորզելով: Կերելի թէ Բօլէնսօի հրայանաձգութիւնը Նավարինի թմրած բարացած արձագանքը զարթուցած ըլլալու է:

Մօտ ժամանակը շատ հեռու չէ, և Յունաստան, որ ի նպատակ Անգլիոյ հրապարակաւ իր համակրանքն յայտնեց, մինակ մնալու ամօթն պիտի ունենայ... քանի որ պարտէր մինակ ինք ընել բարեմաղթութիւններ ի նպատակ հարստահարեալ Թրանսփալի: Սակայն մոլորութիւնն ու ապերախտութիւնը՝ ինչպէս անհատներու, նոյնպէս և ժողովրդոց մէջ հազուադէպ չէ: Եւ այս յիմարութիւն է, աւաղ, յիմարութիւն մը, որ շատ կը վախճամ թէ պիտի չկրնանք բժշկուիլ, ինքզինքնիս աղնուականութեամբ կամ յիմարութեամբ թափառական ասպետներ ներկայացնելու մոլորեալ կամ թափառական իշխանահիներու. այսինքն ի կորուստ մատնուած ազգայնութեանց:

Միացեալ-Նահանգները մեր եղբայրական միջամրտութեան երբէք չնորհակալութիւն չյայտնեցին, և պատրաստ են մեզի դէմ, միանալ Անգլիոյ հետ: Իտալիա իր բոլոր ատելութիւնը ցոյց մեզ: Այո՛, Յունաստանն է. այն Յունաստանը որ Դիմասթենէս մակեդոնական Բարբարոսութեան դէմ զայրացաւ, որ Անգլիացին քաղաքակրթութեան գիւցազնը և Պօէրն որ իր հայրենեաց համար կը մեռնի, բարբարոսութեան ներկայացուցիչը կը ներկայացնեն:

Անգլիա ճիշդ այն «քաղաքակրթութիւն» է պատերազմին մէջ, ինչ որ Թուրքիա դեռ «քաղաքականութիւն» է ի պիրոսի և Ալպանիոյ կողմերը: Թրքական և անգլիական քաղաքակրթութիւնները, երկուքն ալ, մին միւսը կարծեն ու Պօէրները կրնան զրկախառնուիլ խողխողուած Հայերուն հետ:

Եւ ահա ինչպէս ժողովուրդ մը անհաւատարիմ իր պատմութեան ասպետական աւանդութեանց, իր գլուխը նախատանք կը ծածկէ յաջա Եւրոպայի, վասն զի Յունաստան, որ իր գոյութիւնն ու ազատութիւնը կը պարտի Եւրոպայի զինեալ միջամտութեան, պէտք էր

գիտնալ թէ՛ կորուսեալ ազատութիւնը վերստին ձեռք ձգելը ինչ կարծէ՛: Իրմէ անկախ պտտառներով իր բարերար ֆրանսայի կուրծքը ծակեց և անխառնաբար յօշոտելու դիմեց: Նոյնպէս կը յուսամ որ ֆուստտանի ամօթալի ընթացքը գէթ ս.ա. առաւելութիւնը պիտի ունենայ մեզ բժշկելու մեր ունեցած յաւիտենական մոլութենէն. ի շնորհս բնական վեհանձնութեան, մեզ առնչութիւն չունեցող գործերու մէջ խառնուելու և յաճախ շնորհներ ընել այնպիսիներուն, որոնք արժանաւորութիւն չունին:

Paul de Cassanlyac
Բարիդ, 20 Յունվար 1900 Թարգմ. ՅԻՍԷ

ԼՐՏԵՍ—ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆԸ

ՀԱՅԿԱԿԱՆ ՈՂԲԵՐԳՈՒԹԻՒՆ, ԻՆՔ ՏԵՍԱՐԱՆՈՎ

Դիտեց և Գրեց
ՃԵՄԱՐՏԱՆՈՍԵԱՆ
ԺԲ

Նազարէկեան— Չարժէր այստեղ երկարօրէն խօսիլ, քանի որ ժամանակին իմ փաստեր լոյս են տեսել «Հնչակուում», սակայն քանի որ խնդիրը ուղղում է համառօտ ձևի ներքեւ ամփոփել, ես կ'աւանդեմ, երբ ուղում էին Արփիարին Պոլսոյ կոմիտէի մէջ մտնել, մանաւանդ Մկրտիչեան աշխատում էր, նրա գրեցի և յիշեցի Արփիարի կեղտոտ մեղայագիրը, կոկորդն անցկացրած 2000 ռուպլին և հրամայեցի, որ Արփիարին չընդունին կուսակցութեան մէջ, մանաւանդ վարչութեան մէջ: Բայց ինչ որ բնորոշ է, այն էլ իրա՛ Արփիարի բարեկամ Մկրտիչեանի որոշ վկայութիւնն ու կասկածն է: Տեսէ՛ք, ինչ է գրում Մկրտիչեան իբր պատասխան իմ գրածին: «Այլևս չենք կարող Արփիարը չընդունիլ վարչութեան ու կուսակցութեան մէջ, ինչու որ, եթէ Արփիարը գուրս հանենք, կրնայ մատնութիւն առաջ դալ, որովհետև կուսակցութեան բոլոր ղազտներն են անդեակ է»: Ես ոչինչ չունիմ աւելացնելիք, միայն ներկաների ուշադրութիւնն եմ հրաւիրում նրա կատարած կեղտոտ գերի վրայ, որ յետոյ կատարեց նա Լոնտոնում:

Վկայ մը— Ես «Հայրենիք»ի ցրուիչն էի, շատ անգամ Մամբրէ վարդապետին, որ մատնիչ-լրտես ըլլալը յայտնուած էր, Արփիարի սենեակը մտնելը և ժամերով գաղտնի խօսակցիլը տեսած էի. մի օր ա՛լ չկրցի համբերել, Արփիարին ըսի.— քանի որ Մամբրէն մտանիչ մըն է, ձեր անոր հետ տեսնուելը լաւ չէ:

— Ինչու համար, պատասխանեց Արփիար, մատնիչ ըլլալով ինչ կըլլայ, միթէ պէտք չէ՞ անոր հետ տեսնուիլ: Բայց քանի սր մատնիչ մըն է, չեմ ուզեր որ ուրիշներ գիտնան խմբագրատան մէջ անոր հետ տեսնուելս, հասկցա՛ւ: Այս դէպքը ցոյց կ'տայ, որ Արփիար Մամբրէի նման մատնիչ-լրտես մըն է:

Մ. Կիրճեան— Հրապարակաւ խօսածներս և «Շարժում»ի մէջ գրածներս արդէն շատերու յայտնի է, մի բան որ չեմ հրատարակած, այն ալ Արփիարի հարցաքննութեան թղթերը աչքով տեսնելու է, շնորհիւ մատնիչ Թիթիւնճիէֆի, այդ հարցաքննութեան մէջ շատեր Արփիարի կողմէ մատնուած էին:

Ա. Նահապետեան— Թիթիւ մի գաղտնի ժողով ունեցանք, այնտեղ ներկայ էր նաև Արփիար: Երբ Պոլիս հասայ զիս ձերբակալելով Նազարէին առջև տարին: Փաշան մեր Թիթիւն գումարած գաղտնի ժողովէն տեղեկութիւն ունէր. ես զարմացայ թէ ինչպէս լսած էր և ուրիշ: Այդ ժողովին ներկայ եղողներէն ես ու Արփիար Պոլիս կը գտնուէինք, կասկածս Արփիարի վրայ էր, որովհետև Պոլիս ոչ ոք տեղեկութիւն չունէր ժողովի մասին: Իմ կասկածս բոլորովին հաստատուեցաւ երբոր փաշան անհամբեր գտնուելով՝ ըսաւ.

— Այս բոլորը մի ըստ միովէ Արփիար ըսած է իր հարցաքննութեան մէջ, եթէ կուրանաս, հիմա ներկայութեանդ բերեմ: Ուրեմն, Արփիարի մատնութեան վրայ ալ կասկած չէր մնար:

Սուրէն— Ամենուս յայտնի է, որ 95ի հայկական կոստրածը կառավարութեան կողմէ ծրագրուած մի բան էր, Նազար փաշան ամենամեծ գերը խաղացած է: Արդ, մենք երբ Պապը Ալիի ցոյցը որոշեցինք խաղաղասիրական ըլլալու էր այն, բայց յետոյ տեսայ, որ առանց իմ գիտութեան և մի ուրիշ կոմիտէի անդամի, գէնքեր բաժնուած էին հայերուն, և այն ալ Արփիարի հրահանգով: Ուրեմն կը հետեցնեմ թէ Արփիար Նազարի ձեռքը պարզ գործիք մը լինելով, մասնակից եղած է անոր ծրագրերուն գործադրութեան:

Գ. Չ.— Այսօրուան պէս կը յիշեմ, որ Բերայի և Կեղեցիի գինուորներով պաշարուած էր, ներս մտնելը խստիւ արգելուած էր, բայց Արփիար ինչպէս յաջողած էր ներս մտնել: Երկրորդ՝ Արփիար ինչպէս յանգեցաւ պայմաններ առաջարկել թարգմաններուն: Երրորդ՝ կառավարական լրտեսներ եկեղեցիին բակը մի ելլաք գրուած թուղթեր կը նետեն, միւս կողմէ նոյն բանին կը ձգնէր Արփիար: Այս իրողութիւնները ցոյց կտան, որ Արփիար բանտարկուելու վախ չունէր այդ մասին ապահովուած, հետեւաբար թուրք կառավարութեան հրահանգով կը գործէր:

Վ.— Նոյն համոզումն ունիմ ես ալ, երբ միտքս կը բերեմ. որ Արփիար և իր ընկերները «Քաֆէ Սըլան-տիտի» մէջ ազատ համարձակ յեղափոխական ժողովներ կը գումարէին, որտեղ հաղարաւոր լրտեսներ կը վխտային:

Մ. Գալփաքճեան— Արփիար իր գործերով հաստատած է իր վրայ ծախրացած մեղադրանքները, երբ ըսկաւ հակայեղափոխական դադարեցներ քարոզիլ իր «Մարտ» ու «Նոր Կեանք» թերթերու մէջ, այս մասին մի քանի ակնարկութիւններ ըրած եմ «Ի խաչ հան զգա» գրքիս մէջ:

Եուս.— Արփիարի նազարի կողմից պաշտպանեալ և անոր լրտեսը լինելուն կարեւոր փաստը հէնց Արփիար ինքը ընծայել է մեզ: Այն թուականներին Պոլսի հայ լրագիրների ճնշուած գրութիւնը ձեզ ծանօթ է, մայրաքաղաքի ժամանակ Արփիար համարձակութիւն ունեցաւ Մ. Կիրճեանի գէթ «Հայրենիք» թերթում ընկերային դատաստան պահանջել, յայտարարելով որ Մ. Կիրճեան իրա մասին այս ու այնտեղ զրպարտում է. իրան մատնիչ կամ լրտես է անւանում, և այլն: Կիրճ, եանի խօսքերը ամբողջ Պոլսեցիք լսել էին, հետեւաբար Նազար փաշայ իրա լրտեսներով: Արփիար կամ Կիրճեան ինչու համար հարցաքննութեան չենթարկուեցին, կամ ինչպէս ցէնզուրան թոյլ էր տալիս մի այդպիսի յեղափոխութիւն հոտով յօղւած, որպիսին էր Արփիարի ընկերական դատաստանի կոչը: Պէտք է աւելացնեմ, նաև որ Արփիարի մատնիչ ու լրտես լինելուն ջախջախիչ ապացոյցը՝ նրա ձեռք բերուած հարցաքննութեան թղթերն են:

Նախագահ— Այժմ խօսելու կարգը ձերն է Արփիար, կարող էք այս ընթացքները մի առ մի ջրել և կամ ուրանալ, ձեր տալիք պատասխանները մեծ կշիռ ունին, լաւ խորհեցէ՛ք:

(Արփիար անզգայ և անշարժ կը մնայ աչքերը նախագահին յառած, չպատասխաներ. նախագահը կը կրկնէ իր խօսքերը. ձայն չկայ):

Նախագահ— Երբոր չէք սեղեր խօսիլ, դուք ձեզ ձեր վերջին իրաւունքէն կը զրկէք, ժողովը առանց ձեզ լսելու կարող և ազատ է իր վճիռը տալու: Ուրեմն վերջին անգամն ըլլալով կըսեմ, խօսե՛ք:

(Արփիար՝ արդէն սև երեսը լիպ սև կտրած անխօս կը մնայ):

Նախագահ— Ուրեմն, ամբաստանեալը չուզեր խօսիլ, ժողովս այժմ ազատ է իր վճիռը տալու: Օ՛ն, ո՛վ որ Արփիար մէջ բերուած ապացոյցներով դատապարտելի կը գտնէ, թո՛ղ ձեռքը վեր բարձրացնէ:

(Ներկայք, բացի երկուքէն, ձեռքերնին վեր կը բարձրացնեն, նախագահը կսկսի համբել մէկ, երկու, երեք և այլն): Ուրեմն ժողովս մեծամասնութեամբ կը վճռէ Արփիարի զատապարտութիւնը: Քարտուղար, արձանագրէ ժողովի վճիռն ու քուէները:

(Արփիար նստած տեղը կը ցնցուի, կուգէ բարձրանալ, բայց իսկոյն գետին կը գլտորի անկենդան վիճակի մէջ: Ներկայք վրան կը թափին և մահ, կը ստուգեն զարմացական շեշտով գոչելով):

Ներկայք— Մեռած է . . .
Նախագահ— (Ոտքի ելլելով, ներկայք ևս ոտքի կելլեն, Այս վատը, ազգին այս դաւաճանը, այս լրտես-յեղափոխականը արժանի չէր հայու գնդակին, հայուն ձեռքերը այս մատնիչի պիղծ արիւնով ներկուելու փորձութիւնից ազատ մնացին. երկինք իր ձեռքով գործադրեց իր արդար պատիժը: Այո՛, հազարաւոր այրիացած հարսեր, սղաւոր մայրեր և խնդ որբեր իրենց դահիճին մահը լսելով թող մխիթարուին: Աստուծոյ վճիռը արդար է. ժողովրդին ձայնը Աստուծոյ ձայնն է . . . Մահ դաւաճանին . . .

(Բոլոր ներկայք մագնիսացած նախագահին այս վերջին խօսքը կը ըկենն մտով գիւժը ցոյց տալով):
Ներկայք— Մահ դաւաճանին . . .

[Վարադոյրը կիջնէ]

Վ Ե Ր Զ

Ա. Զ. Դ. Ա. Բ. Ա. Բ. Ո Ւ Թ Ի Ի Ն

1896ին չենք գիտեր ո՛ր կողմէն ղրկուած են Պիւրէնի մաքսը տասը սնտուկ փամփուշտներ Արթուր Սուչեան անուն հայու մը, որ Աթէնքի և Պիւրէնի մէջ անծանօթ է: Մաքսային այն պաշտօնեան՝ որուն յանձնուած են սնտուկները, բարեացակամութիւն ունեցաւ ազդարարել մեզ թէ՛ ապրանքները երկար ժամանակ փնտռուած չըլլալով ըստ օրինի աճուրդի դրուած և արդէն կէսէն աւելին վաճառուած ու մաքսային օրինակտն սուրբն ու չորս տարուան վարձքի վճարուելէն յետոյ, մնացեալ 157 տրախմի (100 ֆր.) գումարը պիտի ղրկուի կառավարութեան սնտուկը-Յարգելի պաշտօնեան աւելցուց թէ այս դրամը փոխանակ կառավարութիւնը գանձելու, դուր աւելի աւելատ էք ձեր ազգը թող գանձէ: Փամփուշտները մեր յեղ. կուսակցութեանց պատկանին երազելով երկու ամիս միջոց ուղեցինք սառուղելու համար, այժմ խընդերը կը մնայ այդպէս:

Կը խնդրենք մեր կուսակցութիւններէն որ հաճին ժամ առաջ խնդիր քննել և մի պաշտօնագրով իմացնել մեզ, որպէս զի՝ դրամները ստանալով ղրկենք իրենց, հակառակ պարագային այդ գումարը գանձելով պիտի ղրկենք Տիար Մինաս Զերազի հասցէին, խառն ժողովոյ նախնական բանակցութեանց ծախքերուն համար:

ՍՆՏՈՒԿՆԵՐՈՒ ՊԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆԸ

6 Սնտուկները կը պարունակեն 120 000 հրացանի փամփուշտներ, ծախուած են 901 տրախմի (600 ֆր.) յորմէ աւելցած է տրախմի 138

1 Սնտուկը կը պարունակէ 20 000 հրացանի փամփուշտներ, որոնց 16 000 միայն ծախուած են 138 տրախմի,
աւելցած դրամ տրախմի 19. 75

Գումար 157. 75

3 Սնտուկները կը պարունակեն 4 750 վեցհարուածեանի փամփուշտներ, որոնք դեռ ծախուած չեն:
Այն կուսակցութիւնը որուն կը պատկանին փամփուշտները, պէտք է ապրանքին տեսակն և անոնց որոշ թիւը մանրամասնօրէն նշանակէ պաշտօնագրի մէջ:

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԷՆ

ՄԱՐԱՂԱ, 10(22 Դեկտեմբեր 1899

. . . խմբագիր,

Խնդրում ենք «Միութիւն»ի առաջիկայ համարներէն մէկում տեղ տաք մեր հետեւեալ գրութեան:

Ի նկատի ունենալով Մարաղայի հայ ազգաբնակչութեան կրթական ցաւալի դրութիւնը, մի բուռն երիտասարդներ կազմեցին մի ընկերութիւն, «Մարաղայի Հայոց Կրթական Ընկերութիւն» անուամբ:

Սակայն որովհետեւ տեղական յոյժերը չեն կարող բաւականանալ այդ ընկերութեան ընդարձակ ծրագրի նոյն իսկ մի մասը իրագործելու, ուստի վարչութիւնը Ձեր թերթի միջոցաւ դիմում է բարեգործ ազգայիններին, խնդրելով նոյա նիւթական և բարոյական աջակցութիւնը: Դորանով նոքա՝ այդ բարերար ազգայինները ազատած կը լինին խաւարի անդունդի եզերքում կանգնած Մարաղայի հայ ազգաբնակչութեան:

Վարչութեան նախագահ Արտաշէս Նազարեան

» քարտուղար Միս. Սարգսեան

Société Desamateurs D'instruction

MARAGHA (Perse)

ՕԳՆՈՒԹԻՒՆ ՀԱՅ ՈՐԲԻԿՆԵՐՈՒՆ

Ի նպաստ ՀԱՅ ՈՐԲԻԿՆԵՐՈՒՆ «Բաղմալէպ» բացառիկ պրակ մը կը հրատարակէ: Թերթին երկայնութիւնն է 42 հարիւրորդամէր, լայնք 30 հրդմ.: Թերթը կը բաղկանայ 40 էջերէ. և ամեն էջ 3 լայն սիւնակներու բաժնուած է: Թուղթը հաստ, ողորկ, փայլուն ու շատ ընտիր: Կը պարունակէ ժողովրդեան ուշադրաւ, հետաքրքրական և օգտակար յօդուածներ: «Բաղմալէպ»ի այս բացառիկ լայնածաւալ մեծ թերթը կը հրատարակուի իբրեւ անդրանիկ «Հայ պատկերազարդ թերթ» մը Illustration Arménienne նըման եւրոպական մեծ ազգաց շաբաթական պատկերազարդ թերթերու:

Կը տպուի մի քանի հազար և ստակը պիտի յատկացուի հայ որբանոցներուն:

Գինն է 2.50 ֆր. 1 րբ. 50 սէնթ:

Այս ծանուցագրով կը հրաւիրենք մերազնեայ այն տմէն ազնիւ ու գթած անձնաւորութիւնները որ բաժանորդագրուելով այս բացառիկ պրակին, համեստ լուծայ մը բարեհաճին ձգելու հայ որբիկներու գանձանակին մէջ:

Բաւանորդաց անունն, ով որ այս նպատակաւ որբիկներուն օգնութեան պիտի հասնի, հաւաքուած գումարը և որչափ պիտի յատկացուի իւրաքանչիւր որբանոցներու, պիտի տպուին «Բաղմալէպ»ի պրակներուն մէջ:

Այս բացառիկ թերթին մէջ կը տպուին նաև ծանուցումներ, մէկ տողի գինն է 25 սանթիմ, փափագողք փութան յղել իրենց ծանուցումները:

Rédaction de la Revue Pazmaveh

(St. Lazare)

VENISE

(Italie)

Լոյս տեսաւ ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ԲՆԱՇՆԱՐՀԻԿ ԲԱՌԱՐԱՐԱՆԻ առաջին պրակն, և զայն ունենալ փափաղք պէտք են դիմել ուղղակի Տպագրատան Տեսչութեան: Մէկ քսանթերթեան պրակի բաժնեգինն է կանխիկ առանց ո՛ր և է զեղչի, ֆրանք 2.50 (— 1 րուբլի — 50 սէնթ) որոյ վրայ աւելցնելու է նաև ճանապարհի ծախքն 50 սանթիմ (— 20 կոպ.— 10 սէնթ) և յանձնարարականի (recommandation) համար. որ անհրաժեշտ կարեւոր է Ռուսիոյ թուրքիոյ և նոյն իսկ Ամերիկայի համար, 25 սանթ. (— 10 կոպ. 5 սէնթ). վասն զի կորստեան պատաս-

խանատու չէ Տեսչութիւնս:

Ռուսիոյ ազգայինք կրնան դիւրութեամբ դրկել ռուսական թղթադրամ, և կոտորակ գումարի կամ ճանապարհի և յանձնարարականի ծախուց փոխարէն 30 կոպէկի արդի չգործածուած նամակադրոշմեր, իսկ Ամերիկայի, Թուրքիոյ և այլ աշխարհա, բնակիչք mandat de posteի և կամ ուրիշ իւրաքանչիւր տեղւոյ յատուկ միջոցներով:

Մեր հասցէն է. **Imprimerie Arménienne**
(St. LAZARE) VENISE (Italie)

«ՄԻՈՒԹԻՒՆ»-Ի ԱՌԱՋԱՐԿԸ

ԵՒ Պ. ՄԻՆԱՍ ՉԵՐԱՋԻ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ

Մեր Բարիդի թղթակիցներէն մին հետեւ և նամակը կը դրէ մեզ.

«Միութիւն» առաջարկած էր մայիսին քաղաքիս մէջ չէզոք անձերէ ժողով մը գումարել, պ. Չերազի նախագահութեամբ, կուսակցական պառակտումներուն վերջ մը տալու ազգագուտ նպատակաւ: Աւելորդ չհամարեցի այս մասին պ. Չերազի կարծիքը շօշափել, փետր. 11)23ին, տեսակցութիւն մ'ունեցայ իրեն հետ, և ահա կը հաղորդեմ իր յայտարարութեանց ամփոփումը:

«Իմ խոնարհ կարծիքով, «Միութիւն» մեծ ծառայութիւն մը կը մատուցանէ ազգին, մատը ազգին մեծագոյն վէրքին վրայ դնելով, որ է անմիաբանութիւն: Կուսակցութեանց միացմանը համար, փորձեր եղած են և չեն յաջողած: Բարիդ հիմնուած «Հայկական Կեդրոնական Միութիւն»ը, որոյ ատենապետն ըլլալու պատիւն ունէի, իր բարեյիշատակ գանձապետ Ջունգ ասպետին ստորագրութեամբ՝ հրաւիրեց զանազան կուսակցութեանց պետերը որ Բարիդ դուրսուրին, միացման խնդրոյն վրայ խորհրդակցելու համար. ստացուած պատասխանները բացասական էին զան մեծաւ մասամբ, Ջունգ անմիաբանութեամբ և ընկերութիւնը քայքայուեցաւ: Ասով հանդերձ ազգային պարտք մ'է նորէն աշխատիլ. և ես սիրով յանձն կ'առնուիմ «Միութիւն»-ի խմբագրութեան ինչ պահանջած ծառայութիւնը մատուցանել, ինչպէս որ յայտարարած եմ լրագրիս վերջին համարին մէջ: Միայն թէ բարեփոխում մը կ'առաջարկեմ, յուսալով որ «Միութիւն» չմերժեր զայն, նոյն իսկ յոգուտ իւր առաջարկին:

«Աւելորդ կը նկատեմ շատ մը ծախքեր ընելով չէզոք անձեր գումարել ի Բարիդ, մանաւանդ այս գումարման՝ ցոյցի կերպարանք մը կրնայ տրուել մեր ազգին թշնամիներուն կողմէ: Չէզոքները կրնան միացման վճիռ տալ, այլ չեն կրնար ստիպել կուսակցութիւնները որ միանան: Գուցէ ասով նոր կուսակցութիւն մ'ալ բարդուի հիններուն վրայ, միաբաներու կուսակցութիւնը: Ես կը կարծեմ թէ, քանի որ Դրօշակեան, Արմէնական, Հին Հնչակեան և նոր Հնչակեան կուսակցութիւններն իրենց կողմնակիցներն ունին Բարիդի մէջ, խնդիրն իւր առաջին քայլն առած կ'ըլլայ եթէ այս կողմնակիցներէն չորս հոգի նախնական խորհրդակցութիւն մ'ունենան ինձ հետ քննելու համար թէ միութիւնը փափաքելի՞ է, կրնայ կատարուիլ և ինչ պայմաններով: Եթէ մեր հինգին

մէջ համոզում գոյանայ, երկրորդ քայլը կրնայ առնուիլ՝ հրաւիրելով կուսակցութիւններ: Որ լիազոր ներկայացուցիչներ զրկեն, միացման պայմանագիրը պատրաստելու և ստորագրելու համար: Ուստի, թող իւրաքանչիւր կուսակցութիւն փութայ հաղորդել ինձ իւր ի Բարիդ ունեցած ամենէն վստահելի կողմնակցին անունը, որպէս զի նախնական խորհրդակցութեան հրաւիրիմ զայն: Այս դրութեամբ, առանց ծախքի, առանց աղմուկի գործած կ'ըլլանք, մանաւանդ որ հինգ հոգիի մէջ համաձայնութիւնն աւելի դիւրին է քան բազմաթիւ անձերու մէջ: Եթէ կուսակցութիւններ անապրեր մնան, ըսել է թէ չեն փափաքիր միութեան կամ թէ այս դադափարը կանխահաս է իրենց համար: Այս վիճակին ոչ որ կրնայ դարման տանիլ, թող ժողովուրդը ձայնը բարձրացնէ, միացման ստիպելու համար մեր չորս կուսակցութիւնները, որոնց ճիգերը իրար չէզ բացնելու միայն կը ծառայեն այժմ, փոխանակ հասարակաց թշնամոյն դէմ միացեալ ոյժերով գործելու: Ամեն պարագայի մէջ «Միութիւն»ը իւր պարտքը կատարեց՝ միացման գործնական առաջարկ մ'ընելով, ես իմ պարտքս կատարեցի՝ բարոյապէս ոյժ տալով ձուլման առաջարկին: Թող մեր չորս կուսակցութիւններն ալ իրենց պարտքը կատարեն, այս առաջարկին յարելով կամ աւելի բանաւոր առաջարկ մը ներկայացնելով եթէ ունին:»

ԱԼԱՇԿԵՐՏԻ ԽՍՍՏՈՒՐ ԳԻՂՂԻ ՀԱՅԵՐՈՒ ԵՒ ԹՈՒՐԿԵՐՈՒ ԿՈՒԻԼԸ

83 զինեալ հայ յեղափոխականներ Ռուսոթուրք սահմանէն անցնելով կ'ուզեն Սեբրեին մօտ երթալ. երբ հասնին Սաստուր գիւղը կը լուսաւայ և անկարելի կը թուի իրենց ապահովութեամբ դիմացի լեռը հասնիլ, կորոչեն գիւղի ...ին առանց ցերեպն անյնել ու գիշերը ճամբորդել: Ինչպէս կը պատահի ուղղա ի կամ տնուղղակի կերպով կը մատնուին, գիւղին պէյը Տէրվիշ աղա 1-200 թուրք զօրքերու մասնակցութեամբ 300 քիւրտերով կը պաշարէ յեղափոխականաց բնակավայրը և կը պահանջէ որ անձնատուր ըլլան: Անձնուրաց յեղափոխականները այդ ստորնութիւնը յանձն չառնելով հրացանի կը դիմեն և ամբողջ 8 ժամեր առիւծի պէս կը կռուին քանի մը հարիւր թուրքերու ու քիւրտերու դէմ: Երբ մութը վրայ կը հասնի խումբ մը հայեր թշնամայն զինուորական դոտին ճեղքելով անցնիլ կը փորձեն. 8 հոգի զոհ կուտան, ասոնց կը յաջորդէ ուրիշ խումբ մը, որ մի քանի ժամ կռուելէն վերջ 10 հոգի զոհ կուտայ, ընդամենը 18 հոգի ինկած են պատերազմի դաշտին վրայ. իսկ մնացեալները յաջողած են իրենց հետքերը կորսնցնել:

Հայ օրերով մը, որ կռուի ժամանակ մեր քաջերուն ջուր և այլ պիտոյքներ կը կրէր, հրաշքով ողջ մնացեր է:

Թշնամոյն կորուստը շատ մեծ եղած է, ինչպէս կը պատմէ քիւրտ մը. իրենցմէ բացի բազմաթիւ վիրաւորեալներէ 300 մարդ կորսուած են, որոնց մէջ կը գտնուին Տէրվիշ աղա և մի քանի բարձրաստիճանաւոր զօրավարներ:

Կարս

ԵՐԿՈՒ ԽՕՍԲ

Վերջին ժամանակներս մեր Մայր-Հայրենիքում կատարող դէպքերը այն աստիճան ուշագրաւ են, որ արժէ իսկապէս ոչ միայն դրանք հրապարակախօսութեան նիւթ դարձնել, այլև վէպերի ու պատկերների վերածել ընդհանուր ժողովրդական ընթերցանութեան համար, որպէս պատմական ժամանակակից յիշատակներ:

Ներկայ նորավէպը (Վահէ-ժամանակակից հերոսը), որ բովանդակում է իր մէջ Վասպուրականի վերջին դէպքերից մէկը, որ և մի ամփոփ պատկեր է Տաճկահայ կեանքից, առաջարկելով «Միութիւն»-ի յարգելի ընթերցողներին. մենք ուրիշ նպատակ չենք ունեցել, բայց եթէ փոքր ի շատէ ծառայած լինելու ընթերցող հասարակութեան էսթետիքական ճաշակին մեր հայ աղքատիկ զբաղանքութեան:

Ցաւում ենք, որ մասնաւոր պատճառով մենք չը կարողացանք այս վէպիւր առանձին գրքոյկով հրատարակել, սակայն եթէ այսուհետեւ առանձին արտատուր պեւու ցանկութիւն ունեցողներ լինեն, պայմանների մասին կարող են տեղեկանալ «Միութիւն»-ի խմբագրութիւնից և արտատպել:

Թարգմ.

Ա. Յ. ԱՍՄԱՆ

ԹԵՐԹՕՆ «ՄԻՌԻԹԻՆ»-Ի

(1)

Վ Ա Յ Է

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԵՐՈՍԸ

Das Volk stand auf
Der Sturm brachlos.

Ժողովուրդը բարձրացաւ
Մրրիկը պայթեց:

I

Մ Ի Ր Ո Ղ Ս Ի Տ Ե Ր

Ո՞վ կարող էր պատմել Նազլուի, այդ աղքատիկ աղջկայ գեղեցկութիւնը: Առտնին պարզ և անշուք հանդերձ մէջ էլ նա կատարեալ յաւերժահարսի տիպար էր ներկայացնում: Նրա դէմքի վարդագոյն փայլունութիւնը, նրա սևորակ, կենդանի լրակով վառուղ և գրաւիչ աչքերը լայն կամարակալ յօնքերով, վարդ չրթները, որոնցից կարծես մեզը ծորելիս լինէր. նրա այն սաթանման փայլուն հիւսերը, որոնք հեզիկ շոյում էին նորա ուսերը, առանց այլևայլութեան ամեն մի պատահողի, ամեն նորան տեսնողի ուշադրութիւնը նորա վրայ էին կենտրոնացնել տալիս:

Վաղուց, չափ վաղուց նորանով էին զբաղեցնում իրենց երեակայութիւնը տեղացի երիտասարդները. թէ՛ քնի և թէ՛ արթնութեան մէջ այդ հիւր ին էր միայն, որ պատկերանում էր նրանց հոգու ու մտքի աչքերի առաջ. շատերը նոյն իսկ բացականչում էին. «նորանով միայն ես երջանիկ կը լինիմ»:

Եւ հարս ու աղջիկ, բոլորը, բոլորը նախանձում

ԱԼՊԱՆՕ-ՀԱՅԿԱԿԱՆ ՔՕՄԻԹԷ

Հահէէն փետրուար 13 թուականով հետեւեալը կը գրէ մեզ պ. Սանասուր.

Վերջերս Ալպանացիներու և Հայերու նախաձեռնութեամբ նոր քովթէ մը կազմակերպուեցաւ, որը նպատակ ունի երկու ազգերու միջև բարեկամական յարաբերութիւններ հաստատել, ու յեղափոխական ասպարէզի վրայ համերաշխ գործակիցներ լլալ: Ի մօտոյ պիտի հրատարակեն իրենց գաղափարի օճկան թերթը կէսը հայերէն ու կէսը ալպաներէն լեզուաւ խմբագրուած:

Ալպանօ-Հայկական քովթէն պիտի հրատարակէ նաև չարք մը քաւթ փօսթալներ որոնց առաջին թիւը հրատարակուած է արդէն մեծ քանակութեամբ, կը ծախուի հատը 10 սանթիմ իսկ 100ը միայն 6 ֆր. ցանկացողները կրնան գիմել հետեւեալ հասցէին՝

Mr. Sanassour

Poste Restante

(Hollande)

La Haye

Քաւթը տպագրուած է կարմիր պրիստօլի վրայ, կը ներկայացնէ Սուլթան Համիտը, որուն գլուխը կը կրծէ մարդկային կմախք մը: Պատկերին վրայ գրուած է La Bête Rouge Abdul Hamid վերնագիրն է... Souvenir des Massacres d'Arménie.

էին նորան. աչքով՝ աչք չունէին նորան տեսնելու. և շատ անգամ նոյն իսկ այդ նախանձը փոխուում էր ատելութեան:

«Ինչո՞ւ այդ անիծածը միայն գրաւէ մեր մատաղ տղերանց սիրտն ու հոգին, ինչո՞ւ նորա վրայ միայն աչք տնկեն մերոնք.» մըմնջում. ասում էին իրարու:

Բայց միայն անհուն գեղեցկութիւնը չէր, որ գրաւում էր բոլորին. այլ նա այդ բնատուր պարզ և հետ միասին օժտուած էր համեստ, պարզ ու մաքուր բնաւորութեամբ. իսկ այդ առաւելութիւնների հետ միասին ամօթխած էլ էր. ամեն մի սիրային թիթե նկատողութեան դէպքում, որ անում էին իւր ընկերուհիները աւելի նորան ջգրեցնելու մտքով, նա կարմրում էր, շագանակի վառ գոյնը ստանում, աչքերը փակում և երեսը միւս կողմն էր դարձնում: Եւ այդ ժամանակ նա կատարեալ հիւր ին էր՝ ոգի, որին պահասում էին միայն մի փոքրիկ զոյգ, թափանցիկ թեւիկներ:

Երիտասարդները սակայն այլևս երկար ժամանակ չը կարողացան զբաղել և զմայլիլ նորանով, նորանք բոլորն էլ ստիպւած եղան այլևս երես դարձնել Նազլուից, մոռնալով նորան, մոռնալ և անձնատուր լինիլ իրանց հոգսերին... որովհետեւ Նազլուն այլևս նշանած էր...

Վահէն էր նորա նշանածը, մի օտարական, հսկայ և հուժկու երիտասարդ, լայնաթիկունք և գեղեցկութեամբ կատարելապէս համապատասխանող Նազլուի թովիչ տեսքին:

Նազլուն միայն նրան բացեց ու բաշխեց իր սիրտը, նրան տաւ իւր ձեռքը՝ անխախտ և յաւիտենական սիրոյ, մաքուր և անարատ սիրոյ խոստումով:

Եւ երկու սրտերն էլ անհուն սիրով կպան իրարու: Վահէն այն անձնաւորութիւններիցն էր, որ զգայուն սրտի տէր լինելով՝ չեն կարողանում տանել

Հայ յեղափոխութիւնը՝ եթէ իր ազգակիցներուն մեծամասնութեան բարոյական աջակցութենէն զուրկ է, գէթ օտարազգի գործակիցներ ու համախոհներ կ'ունենայ. այդ ալ միտքարական չէ՞ միթէ:

«ԲԱՆԱՍԵՐ»

Հանգէս Հնտիսօսական, Պատմական Լեզուաբանական և քննական: Կը հրատարակուի երեք ամիսն մի անգամ, տարեկան չորս գիրք: Տնօրինութեամբ Կ. Յ. Բասմաճեանի և աշխատակցութեամբ ազգային և օտար արեւելագիտաց:

«Բանասէր» տարեկան բաժնեգինն է 20 ֆրանք ամէն տեղի համար:

«Բանասէր»ը շատ քիչ քանակութեամբ տպուելուն համար կը խնդրուի որ բաժանորդ գրուելու փափաք ունեցողներ, ժամ առաջ յայտնեն իրենց հաճութիւնը: Հասցէ

Mr K. J. Basmadjian

Paris 112 Bd. Rochechouart

Շնորհակալութեամբ ստացած ենք Մոսկուէն Հաղարեան ձեռնարանի Արեւելեան լեզուաց մատենադարանին մէջ պահուած 887 թուականին գրուած մտ-

կեանքի մէջ տեղի ունեցող անորոգարութիւնները, այլ նոյն իսկ կեանքի դպրոցը սովորեցնում է նրանց ընկնել երազներին, իդէալներին յիստից՝ իրենց եղբայրակիցներին կեանքի ծուռ շաղկից հանելու համար, հասարակութեան ընկած բարոյականութիւնը կրկին բարձրացնելու, մարդկութեան մի տեսակ բարիք անելու համար: Իւր սուղ միջոցների մէջ Վահէն երբեք չէր մոռնում աշխատել այդ վեհ իդէալների իրագործւելու համար: Ամենածանր գործերի մէջ, իւր չարքաշ կեանքի ծանրութեան տակ նա այդ նպատակով անում էր այնքան բան, որքան կարողանում էր, որքան ուրիշները նոյն իսկ չէին էլ մտածում:

Իսկ այդ հայրենասիրական սքանչելի արժանաւորութիւններով Վահէն հետզհետէ աւելի ու աւելի էր էր բարձրանում նոյն մտքերով տոգորւող Նազլուի աչքում. այդ արժանաւորութիւնները տեսնելով շատ անգամ Նազլուն խոստովանում էր, որ անարժան է ինքը Վահէին: Այդ գեղեցկուհու աչքում Վահէն երեւում էր որպէս մի գերմարդկային ոգի՝ իւր մտքերով, իդէալներով, գործերով: Եւ հէնց այդ էր պատճառը, որ Նազլուն թողած իւր հայրենակից երիտասարդներին այդ օտարականի առաջ միայն անհուն ակնածութեամբ գլուխ թեքեց, սիրեց ու պաշտեց այդ օտարին, որ վերստեք կտրած այդ տեղ էր եկել ո՞վ գիտէ ի՞նչ իդէալներով և ի՞նչ նպատակով: Իսկ երբ այդպէս եղաւ, այդ ժամանակ տեղացի երիտասարդները աւելի բոլորքեցան, գրգռեցան, բայց... այլևս ի՞նչ կարող էին անել... անցածն անցել էր:

Սակայն այդչափ սիրուն հոգին, այդ չնաշխարհիկ գեղեցկութեան աէր Նազլուն չէր կարող խուսափել Լիտի թիւրքերի աչքերից: Ամենքն էլ տեսել ու ճանաչում էին նորան: Եւ վաղուց, շատ վաղուց տաճկաց կրօնապետ չէլիսը տանջւում ու մոսածում էր՝ թէ ինչպէս ձեռք բերի այդ Մարգարէի խոստացած ապագայ

գաղտնի գրչագիր հայերէն Աւետարանի լուսատիպ հրատարակութիւնը:

Իբրեւ հնագոյն հայ գրչագիր այս Աւետարանը մեծ կարեւորութիւն ունի հայ հնագիտութեան համար և մանաւանդ նոր Կտակարանի բնագրի քննական ուսումնասիրութեան համար ի նկատի առնելով նորա բազմաթիւ տարբեր ընթերցուածները, ոչ պակաս հետաքրքրական է և գրչագրի ուղղագրութիւնը:

Լուսատիպ հրատարակութիւնը բաղկացած է 229 թղթից կամ 458 երեսից մեծ քառաձաղ դիրքով ընտիր թղթի վրայ: Գրքին կցած է և ընդարձակ առաջաբան: Տպագրուած են շատ սահմանափակ թուով օրինակներ (միայն 300), գրքին պինն է ճանապարհածախսով 20 ռուբլի (23 ռ. վերագիր վճարով) Ռուսաստանի համար և 60 ֆր. արտասահմանի համար: Դիմելու է ի Մոսկուա Հաղարեան ձեռնարանի հետեւեալ հասցէին.

Institut Lazareff des langues Orientales,
MOSCOU.

Հ Ի Ս Ե Ա Լ Ի Ջ Ո Ւ Ր

Հերթափոխութիւնը կը դադարեցնէ, թափած մազերուն տեղը կը բերէ և գլխու մազերը կ'ընկնեն: Թող փութան օգտուի այս դեղէն ամէն անոնք, որ դատապարտուած են ճաղատ ըլլալու: Աշխարհի վրայ գտնուած բոլոր այս օրինակ դեղերն ըստագոյնն է: Փորձեցէ՛ք և պիտի տեսնէք: Հասցէ

H. Azadian Caire (Egypte)

Յանձնարարութիւնը կանխիկ դրամով և բոսթի ծախքը ուղղորդելու վրայ է:

յաւիտենական կեանքի կատարելագոյն հիւրի-մէ-լ է քին:

Եւ նա վճռել էր ձեռք բերել, թէկուզ ի՞նչ էլ լինէր, թէկուզ ամբողջ բաւաքը, երկիրը այդ իսկ պատճառով տակն ու վրայ լինէր:

Իսկ այդ բանը արդէն հասկացել էին Նազլուն և Վահէն: Եւ զգոյշ էին. զգոյշ մանաւանդ այդ արհաւիրակ ժամանակամիջոցներում, երբ տաճկական բռնապետութիւնը այդ վայրերի վրայ էլ էր ատամ կըրծտեցնում:

—Ի՞նչ 'ը լինի մեր ճարը, Ասուած իմ, ասում էր մի անգամ Նազլուն Վահէին մաայլ և մտածկոտ դէմքով: Ի՞նչ կը լինի մեր դրութիւնը, եթէ յանկարծ իրագործւելու լինի այդ ո՞չ ու փուճ, այդ սատանայի, այդ անիծից ծնունդ չէլիսի մտադրութիւնը, ո՞հ, ես արդէն ելեակայում եմ... երեակայում եմ և սոսկում, սոսկում եմ ամբողջ էութեամբ, Վահէ ջան... ի՞նչ անեմ...

—Մի՛ երկնչիր, հոգիս, պատասխանեց Վահէն, և ո՞վ է նա, որ կը յանգգնի իմ ներկայութեամբ քեզ մօտեան... գուցէ ես իմ կեանքն ու հոգին... եթէ դու չլինիս... բայց... հապա թող փորձէ մէկը ձեռք մեկնել, ո՞, շան-ոստակ կանեմ նրան գլուխը ջախջախելով քարերի վրայ: Մի ամիտ եղիր, աղաւնեակս, մի երկնչիր բնաւ:

Բայց Նազլուն թեւեւ, որ այդ խօսքերը լոկ արտաքին արտայայտութիւններ են մի ինքնավստահ մարդու. ուստի աւելի ևս մաայլելով իւր գեղեցիկ դէմքը, ասաց...

(Կը շարունակւի)

Ա. Յ. ԱՍՄԱՆ

Թաւրիչ 1899

Երեք ամիսէ ի վեր մեզ հասած բոլոր նամակներն անպատասխանի թողած ենք միւր կամքէն անկախ պատճառներով: Առ այս հրապարակաւ ներողութիւն հայցելով կը խոստանանք թուականէս սկսեալ հետզհետէ պատասխանել: